ԱՄԵՆԱՄԵԾ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր ժամանակներում, ամենահին դարերից սկսած, մարդու մեջ առաջին հերթին գնահատվել են առաքինության գծերը և ամենից շատ՝ բարեգործությունը, քանզի դրանից են բխել նրա մարդկային նկարագրի մյուս հատկանիշները: Ահա թե ինչու, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային աշխատությունն այսպես էր բացատրում բարեգործ բառի նշանակությունը «Որ գործէ զբարին, բարեպաշտ, առաքինի»: Նաև՝ «Բարերար, երախտագործ, մարդասէր»: Այս բազմակողմանի բացատրությունները ցույց են տալիս, թե ինչպիսի համապարփակ բան է բարեգործությունը: Չէ՞ որ բարեգործությունն առաջին հերթին մարդասիրություն է: Ահա թե ինչու, խոսելով անհատի մասին, առաջին հերթին շեշտել են նրա բարի գործերը ու նաև, թե որքանով է ողորմացող եղել: Այս պարագան շատ ու շատ է կարևորվել, իսկ չէ՞ որ սա գալիս էր Աստվածաշնչական ժամանակաշրջանից՝ աղքատներին ողորմալու, որբերին ու այրիներին չզրկելու հորդորներից: Ահա թե ինչու Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսն, ուսուցանում էր աշակերտներին «Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն»: Եվ մի՞թե այս խրատից չի բխում և ժողովրդական իմաստուն ասացվածքը «Ողորմողին ուրիշը կողորմի»: Սակայն Հիսուսը սովորեցնում էր ոչ թե ողորմալ ցուցադրաբար, այլ անտես կերպով «Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես»:

Այո, բարեգործությունը պիտի արվեր այնպես, որ միայն Աստված իմանար: Արվեր առաջինի կերպով: Ահա թե ինչու էր ժողովուրդը իր զավակներին խրատում. «Ողորմությունն այնպես տուր, որ շապիկդ չիմանա»: Այդպես է, քանզի Աստված ամենատես է և նա է քննում մեր արածները: Ահա այս ոգով էին ուսուցանում Եկեղեցու նշանավոր հայրերը, գիտուն ու իմաստուն այրերը անհատներին՝ հասարակությանը մղելով բարեգործության: 5-րդ դարի մեծ գիտնական Եզնիկ Կողբացին իր խրատներում գրում

էր. «Աստված ինչ շնորհներ որ տալիս է քեզ, կարիքավորների պետքերին ծառայեցրու, որ շնորհներն աղբյուրի պես առատանան, և դու փառավորվես»: Հետագայում այդ էին ուսուցանում նաև բանաստեղծները, տաղերգուները, գուսանները, ժողովրդական երգիչները: Ո՞վ չի հիշում մեծ Սայաթ-Նովայի խրատը. «Աղկատ սիրե, ղոնաղ սիրե, տար սիրե»: Իսկ տարն էլ Ետարն է՝ պանդուխտը: Այո, նա աղքատասիրության էր մղում իր ունկընդիրներին, բարեգործության հունդերը սերմանում նրանց գիտակցության մեջ: Աղքատ սիրե. իսկ աղքատասիրության շատ վաղուց էին մղում մարդկության մեծերը, և ինչպես ասացինք՝ վկան Աստվածաշունչն է: Ահա թե ինչու աղքատասիրությունը դառնում էր մարդ արարածի առաքինության չափանիշ: Դա էին ուսուցանում թե՛ սրբերի ու երանելի մարդկանց վարքերը, թե՛ հեքիաթներն ու զրույցները և թե՛ խրատներն ու առակները: Աղքատների հանդեպ անողորմ գտնվողներին ինչպե՞ս էին ծաղրում իրենց առակներում Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին: Բայց և չքավոր ու աղքատ մարդկանց հանդեպ ի՞նչ հոգատարությամբ են լցված «Սասնա Ծռեր» էպոսի հերոսները: Նրանք միշտ ու ամեն կերպ օգտակար են լինում հասարակ մարդկանց, պաշտպան կանգնում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, երբ Սանասարն ու Բաղդասարը Սասունը հիմնելիս իրենց հետ, որպես առաջին բնակիչներ, բերում են քառասուն տուն չքավորներ: Ահա եղբայրների զրույցը այդ առիթով.

Սանասարն ասաց Բաղդասարին
— Առաջ ըզմեր բե՞րդ շինենք,
Թե չէ՝ զէդա աղքատ-ուղքուտի տներ:
Բաղդասար պատասխանեց.
— Առաջ շինենք զէդոնց տներ.
Նոր շինենք ըզմեր բերդ...

Շատ ու շատ հեքիաթներում դժվարին հանձնարարությամբ ճանապարհ ընկած հերոսի գործերը հաջողվում են, և նա հաղթող է դուրս գալիս, երբ ողորմում է աղքատներին, կենդանիներին և նույնիսկ միջատներին: Իսկ այդպիսի հեքիաթները ժողովրդի մեջ տարածված են եղել հին ժամանակներից: Շատ սիրելի են եղել նաև նմանատիպ զրույցները: Ահա թեկուզ դրանցից մեկը. մի թագավոր անժառանգ էր, և նրա բազում աղերսանքները Աստծուն լսելի եղան, և ծնվեց մի որդի: Իմաստուններն ու աստղագետները նրան երկար տարիների բախտավոր կյանք գուշակեցին, եթե մինչև 15 տարեկանը օձը չխայթեր: Եվ թագավորը նրան պահում էր մի առանձին պալատում, ուր միայն ելումուտ էին անում սպասավորները: Իսկ ինքն էլ ամեն օր համադամ խորտիկներ ու քառասուն դահեկան դրամ էր ուղարկում, որպեսզի որդին բաժաներ աղքատներին: Մի օր էլ թագավորը որդուն խաղող է ուղարկում, որի մեջ թաքնված օձը ծածուկ մտնում է նրա մահիճը: Եվ ահա մի աղքատ պատուհանի տակ կանչելով, քնից արթնացնում է տղային և ողորմություն խնդրում: Տղան արդեն 14 տարեկան էր: Նա քաղցրաձայն համոզում է մուրացկանին, թե սպասի մինչև հայրը կերակուրներն ուղարկի: Սակայն սա ասում է, թե չի կարող, քանի որ սովամահ է լինում իր որդիների հետ: Այս լսելով տղան մի շքեղ ոսկե սկավառակ է տալիս: Աղքատն էլ օրհնում է նրան և ասում՝ թող Տերը քեզ ազատի այս-օրվա պատահարից, որ պատահելու է: Դրանից հետո օձը փաթավելով

տղայի պարանոցին ցանկանում է խեղդել, սակայն աղքատի կերպարանքով հայտնված Աստծո հրեշտակը չի թողնում, մինչև ծառաները վրա են հասնում ու սպանում: Այս լուրն առնելով, գալիս է թագավորը և ցնծալով որդուն իր պալատը տանում: Զրույցն այսպես է ավարտվում՝ թագավորի որդին, տեսնելով ողորմության օգուտները, օրըստօրե ավելացնում է իր ողորմածությունը և հոր մահից հետո ժառանգում նրա թագավորությունը: Զրույցը ունի «Պատմութիւն վասն ողորմութեան առնելոյ» վերնագիրը, և մեզ է հասել գրավոր երեք խմբով: Հնագույնը վերաբերում է 15-րդ դարին: Զրույցի միտումը վերնագրից սկսած մինչև ավարտը՝ շատ է պարզ. չունևորների հանդեպ գթասրտությունը մարդուն ազատում է բոլոր փորձանքներից:

Որ աղքատասիրությունը շատ էր կարևորվում հնում ու միջնադարում, պարզ երևում է և Թովմա Արծրունու, «Արծրունյաց տան պատմության» Անանուն շարունակողի մոտ, երբ պատմում է Գագիկ Արծրունի թագավորի մասին (908—943 թթ.). «Բարեխնամ գթությամբ դարմանում էր աղքատներին, վերադարձնում գերիներին, փրկում հափշտակվածներին, իրավունք տալիս որբերին ու այրիներին, ավարտում-գլուխ էր բերում ամեն մի առաքինասեր արարք»: Ահա այս բոլորն այնքան կարևոր է համարում պատմիչը, որ միայն սրանից հետո է շարադրել նրա շինարարական, իրոք որ, զարմանալի գործունեությունը: Զէ՞ որ Գագիկ Արծրունին էր կառուցել Ռստան շքեղ քաղաքը, Աղթամար կղզու հրաշալիքները, որոնցից միայն Սուրբ Խաչ տաճարն է մեզ հասել՝ միջնադարյան ճարտարապետության մարգարիտներից մեկը:

Բնական է, որ աղքատասիրությունն առաջին հերթին պետք է դրսևորեին հենց իրենք՝ հոգևոր անձինք: Դրա օրինակները մեր մատենագրության մեջ շատ ու շատ են: Ահա Առաքել Դավրիժեցի պատմիչը (17-րդ դար) իր «Պատմության» մեջ խոսելով բարեգործ հոգևոր հայրերի՝ Սարգիս Եպիսկոպոսի և Տեր Կիրակոսի մասին, որոնք ճգնակյացների համար անապատներ հիմնեցին և վանքեր ու եկեղեցիներ բարեկարգեցին, Տեր Կիրակոսի մասին ասում է հետևյալը, երբ նա վճռել էր գնալ Երուսաղեմ, «Վաճառեց իր ողջ ունեցվածքը, որոշ մաս տվեց աղքատներին, տունն ու հողերը հանձնեց Տրապիզոնի եկեղեցուն»:

Գթալու և ողորմալու հնագույն վկայություններից մեկը Մովսես Խորենացու բերածն է Հայոց Աբգար թագավորի տիկնոջ՝ Հեղինեի մասին. «Իսկ Հեղինեն, որ իր ամուսնու՝ Աբգարի նման զարդարված էր հավատով, չհանդուրժեց կռապաշտների մեջ բնակվել, այլ գնաց Երուսաղեմ Կղավդիոսի օրերը, այն սովի ժամանակ, որը գուշակել էր Ագաբոսը: Եվ իր բոլոր գանձերը Եգիպտոսում ծախսելով շատ մեծ քանակությամբ ցորեն գնեց և բաժանեց բոլոր կարոտյալներին...»: Այդպես էր վարվել Հեղինե թագուհին ամուսնու մահից հետո՝ հիացնելով իր բարեգործությամբ ու աղքատասիրությամբ:

Եթե այդպես դրվատվում էր ողորմածությունը, ապա պետք է այպանվեր և հակառակը: Ահա թե ինչու Խորենացին իր «Ողբում» այնպես ցավով էր գրում. «Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են...»: Իսկ ծերիկը ինչպե՞ս էր զայրույթով գրում այն մեծատան մասին, որը չէր ողորմացել կարոտյալներին:

Ինքն է ժողվել, ինքն է կերել,
Հաց մի չիշխեաց յիրմէն ուտել...

Եղել են և առտ բարեգործներ, որոնք հանուն չքավորների հանգանակածը իրենք են վայելել: Նմաններին է դառնորեն ծաղրել 18-րդ դարի աշուղ Ճերեան Օղլու Մինասան իր տաղերից մեկում.

Թող թողուն զմեզ մեր հալը,
Չի կողոպտեն խալխին մալը...

Բանաստեղծները մարդկանց բարեգործության էին մղում ոչ միայն իրենց տաղերով, այլև հենց անձնական օրինակով: 15-րդ դարում էր ապրում բանաստեղծ, մանրանկարիչ և նշանավոր հոգևորական Մկրտիչ Նաղաշը, որի կենսագիրը ասում է. «ընկերասէր, օտարասէր, աղքատասէր, խաղաղարար, խոնարհ և համբերող, ողորմած...»: Եվ քանի որ այդ շրջանում արդեն մեծ չափերի էր հասնում պանդխտությունը, նա իր տաղերում նկարագրելով պանդուխտների տառապանքները՝ հորդորում էր ողորմած լինել նրանց հանդեպ.

Նաղաշն ասաց, թէ ղարիպին սիրտն է քնքուշ,
Քաղցրընն լեղի թուի նմա և վարդն՝ փուշ,
Զինահար հետ ղարիպին գրուցէ անուշ
Ողորմութիւն տուր և քաւէ զմեղացն փուշ...

Բարեգործությունն ունենում էր զանազան դրսևորումներ: Եվ ամենակարևորներից մեկը կարոտյալների բժշկումն էր, հոգատարությունը անբուժելի հիվանդների հանդեպ:

Բժշկությունը շատ հին արմատներ ուներ Հայաստանում, հեթանոսական շրջանում դրանով հիմնականում զբաղվում էին քուրմերը: Փաստեր կան, որ մեր թվարկության առաջին դարերում Հայաստանում հիվանդանոցներ են գործել: Ըստ Մաղաքիա Օրմանյանի 3-րդ դարում Սուրեն Սալահունի նախարարի Աղվիթան կողակիցը Դերջան գավառում Առբենուտ հանքային աղբյուրների մոտ, իր միջոցներով բորոտանոց էր հիմնել և ծածուկ պաշտում էր Հիսուսին: Այս աստվածահաճո գործը Եկեղեցու կողմից առավել զարգացավ ու համակարգվեց 4-րդ դարից սկսած:

Բնական է, որ այս գործի համար շատ մեծ նշանակություն ունեին Հիսուսի կողմից կույրերի, համրերի, անդամալույծների, բորոտների և այլ անբուժելի հիվանդների բժշկումների օրինակները: Զանազան վարակիչ հիվանդների բուժումը, նրանց համար հիվանդանոցների և ապաստարանների կառուցումը լայն թափ է ստանում Ներսես Մեծ հայրապետի օրոք: «...Նա հրամայեց, որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ, առանձնացած անբնակ տեղերում...: Այս հիվանդանոցների վրա բաշխեց ավանները և ագարակները, որպեսզի իրենց արտերի արդյունքներից արածող անասունների կթից ու բրդից բաժին հանեն և պարտավորաբար նրանց պետքերը հոգան»—վկայում է Պատմահայրը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ «նախ անձամբ ինքն էր բարիքներ գործում, հետո ուրիշներին բարեգործության օրինակ տալիս...: Հորդորում էր խնամել աղքատներին, նրանց դարմանել...»:

354 թվականին Աշտիշատի ժողովում, որը Ներսես Մեծն էր հրավիրել, այս հարցը դարձավ քննության առարկա: Ըստ Բուզանդի՝ «որոնում-գտնում էին պատշաճ տեղեր, զատում էին՝ նրանց մեջ աղքատանոցներ շինելու համար, որտեղ պետք է հավաքեին ախտավորներին, բորոտներին, հաշմանդամներին, ցավագարներին: Որոշեցին շինել ուրկանոցներ, սահմանել նրանց սնունդ և դարման, իսկ աղքատների համար՝ պատսպարան»:

Ըստ պատմիչի՝ Ներսես Մեծն իր ողջ ունեցվածքն այդպիսի հիվանդների վրա էր ծախսում, անձամբ ներակրում նրանց և դարմանում վերքերը:

Ահա այդպիսին էին բարեգործության ըմբռնումները 5-րդ դարի Հայաստանում, մի հարց, որը բարձրացվել էր պաշտոնական-եկեղեցական մակարդակի: Այն շարունակվեց նաև հետագայում: Դվինի եկեղեցական ժողովի (645 թ.) կանոնների ԺԱ հոդվածով ոչ միայն հիվանդանոցներն էին ազատվում հարկերից, այլև պարտադրվում էր այնտեղ գտնվող հիվանդներին խնամել ու կարիքները հոգալ: Իսկ Պարտավի (768 թ.) ժողովի կանոնախմբում հատուկ կետ կար հիվանդանոցների մասին: Քանի որ արաբական գերիշխանության շրջանում դրանց մի մասը ավերվել էր, ուստի եպիսկոպոսներին և աշխարհիկ իշխանավորներին հանձնարարվում էր վերաշինել և ժողովելով հիվանդներին և հաշմանդամներին՝ խնամել: Հայաստանում գործում էին բժշկանոցներ, ուր բարձրագույն մասնագիտական կրթություն էին ստանում երիտասարդները: Բժշկությունը մեծ զարգացում ապրեց կիլիկյան Հայաստանում: Լևոն Բ (1187—1219 թթ.) Մեծագործ թագավորի դուստր Զաբել թագուհին և նրա Հեթում ամուսինը մեծ հոգատարություն էին հանդես բերում ուսումնագիտական կենտրոնների հանդեպ, որը վկայում է նաև Վահրամ Ռաբունի իմաստասերը: 1241 թվականին Զաբել թագուհին Սիս մայրաքաղաքում հիվանդանոց է հիմնել: Նրա մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Աստծո կամքի հանգստարանն էր, բարեգործ, ողորմած ու աղքատասեր...»:

Բժշկության զարգացմանը մեծ նպաստ էր բերում 12-րդ դարի նշանավոր բժշկապետ Մխիթար Հերացին:

Թաթար-մոնղոլների արշավանքների հետևանքով շատ բան ամայացավ, նաև հիվանդանոցներն ու բժշկանոցները: Սակայն բժշկագիտական միտքը կրկին փայլատակեց Հայաստանում ի դեմս 15-րդ դարի մեծ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու: Նա գրում էր ոչ միայն նշանավոր աշխատություններ, այլև զբաղվում էր գործնական բժշկությամբ և իր գործընկերներից պահանջում էր հավասարապես բուժել թե՛ հարուստներին և թե՛ աղքատներին:

Բարեգործությունը շատ մեծ չափով հանդես էր բերվում նաև գրչությունն ու մանրանկարչությունը հովանավորելու ասպարեզում: Թե՛ իշխաններն ու թագավորները և թե՛ մեծահարուստներն ու արհեստավորները և շատ ու շատ հոգևորականներ ձեռագրեր էին պատվիրում ու նվիրում վանքերին ու եկեղեցիներին: Գրչությամբ էին զբաղվում նաև նշանավոր անձինք և գրչագրերը անպայման նվիրում վանքերին: 14—15-րդ դարերի քերթող և պատմագիր Գրիգոր Ծերենց Խլաթեցու «Վարքում» ասվում է, թե նա օր ու գիշեր գրում էր և անհամար գրքեր գրեց ու նվիրեց եկեղեցիներին կամ էլ վաճառելով՝ դրամը բաշխում էր աղքատներին ու կարոտյալներին: Մեր ձեռագրերի հիշատակարանները հարուստ են նաև գրչագրերը օտարների գերությունից փրկելու փաստերով, որը ևս կարևոր բարեգործություն էր:

Բարեգործությամբ ու նշանավոր անհատների ծախսերով ու միջոցներով էին կառուցվում շատ ու շատ շինություններ. վանքեր, տաճարներ, եկեղեցիներ, բերդապարիսպներ, հյուրատներ և այլն: Եվ այդ բարեգործների շարքում քիչ չէին կանայք, որոնք այդ գործը ձեռնարկում էին իրենց ամուսինների, որդիների հետ, իսկ հաճախ էլ՝ մենակ: Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ իշխանուհի Սոփիան է Գնդեվանքի անշուք մենաստանում կառուցել հայտնի եկեղեցին և արձանագրության մեջ գրել. «Մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի և եկի ակն ի վերայ»:

Արծրունյաց Մլքե թագուհին ոչ միայն օրինակել է տվել նշանավոր Ավետարանը, այլև մասնակցել Վարագա Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը: Արուճի հայտնի տաճարը կառուցել են Գրիգոր Մամիկոնյան իշխանն ու Հեղինե իշխանուհին: Սյունյաց Սմբատ Ա իշխանն իր կնոջ՝ Շահանդուխտի հետ է կառուցել Որոտնավանքը և Հերմոնի վանքը: Այրարատում ու Շիրակում իրենց կառուցումներով աչքի են ընկել Բագրատունիներն ու Պահլավունիները: Անիի Մայր տաճարը, որ պատկանում է Տրդատ ճարտարապետի հանճարին, կառուցել է Գագիկ Ա-ի կողակից Կատրանիդե թագուհին:

Իրենց բարեգործությամբ ու շինարարական գործունեությամբ հայտնի են եղել Գրիգոր Պահլավունի իշխանն ու կողակից Շուշանը, նրանց որդին՝ նշանավոր սպարապետ Վահրամ Պահլավունին և ընտանիքի մյուս անդամները: Նրանց ենք պարտական մի շարք նշանավոր հուշարձանների կառուցման և առաջին հերթին՝ Մարմաշենի վանքի համար:

Հասան Ջալալ իշխանն է կառուցել Արցախի նշանավոր Գանձասարի վանքը, մի իշխան, որին Կիրակոս Գանձակեցին անվանում է «Ողորմած ու աղքատասեր»: Արցախում գտնվող Կուսանաց անապատի եկեղեցին 1616 թվականին կառուցել են մելիքական ընտանիքից Գայանե և Հռիփսիմե քույրերը՝ Տեր Առաքելի աջակցությամբ:

Մեր մատենագրությունն ու վիմական արձանագրությունները շատ հարուստ են նման վկայություններով ու փաստերով:

Բարեգործությունը շարունակվել է ողջ պատմության ընթացքում: 19-րդ դարը նոր որակ տվեց մարդկային այդ առաքինությանը, ավելի զարգացրեց ու համակարգեց: Անհատ բարեգործների հետ, որոնք բավական շատ էին թե՛ 19-րդ դարում և թե՛ ներկա դարում ու այժմ էլ, սկսեցին հանդես գալ բարեգործական միություններ, ընկերություններ ու կազմակերպություններ: Բարեգործությունը ընդարձակեց իր գործունեության ոլորտը, սակայն և պահպանեց իր նախաստեղծ ազնիվ իմաստ-նպատակը՝ մշտապես բարիք գործել: Եվ այսօր էլ նույնն է...

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ